ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանի՝ 2019 թ. մայիսի 16-23-ը Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 16-23-ը Եվրամիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը պաշտոնական այցով գործուղվել էր Իտալիայի Տուշայի համալսարան: Պատվիրակության կազմում էին՝ կրթության որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը, գիտական քարտուղար Ատոմ Մխիթարյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանը, արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական անձնակազմի՝ Իտալիայի Տուշայի համալսարան պաշտոնական այցի շրջանակներում գիտական քարտուղար Ատոմ Մխիթարյանը առանձին հանդիպում ունեցավ Սննդագիտության պրոֆեսոր, մոլեկուլային սնուցման լաբորատորիայի վարիչ Նիկոլո Մերենդինոյի հետ:

Քննարկվեցին բարձրագույն կրթության երրորդ աստիճանում ուսումնառության սկզբունքները Հայաստանում և Իտալիայում, հայկական ասպիրանտուրայի և իտալական դոկտորանտուրայի ուսումնական և հետազոտական պլանների համադրելիության խնդիրները, գիտական ղեկավարներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև համատեղ հետազոտությունների իրականացման պոտենցիալն ու հնարավոր ոլորտները: Հանդիպման ընթացքում խոսվեց գիտական առաջին աստիճանի հայցման ատենախոսության և գիտական հոդվածներին ներկայացվող պահանջների մասին: Հետաքրքիր է, որ Իտալիայում դոկտորի գիտական աստիճան ստանալուց հետո լայնորեն

կիրառվում է հաբիլիտացիայի պրակտիկան, ինչը մասնագետին հնարավորություն է տալիս դասավանդել համալսարանում:

Ատոմ Մխիթարյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական քարտուղար

27.05.2019 թ.